

ԳԱՎԱ ՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ

27.04.2013թ.

Մասնակցում էին խորհրդի 17 անդամներ

Օրակարգ`

1. ԳՊՀ հիմնադրման 20-ամյակի առթիվ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի աշխատակիցներին շնորհակալագրի ներկայացնելու և առաջարկվող միջոցառումների ծրագրի մասին հարցը
2. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
3. Պրակտիկայի կազմակերպման ընթացքը 3-րդ կուրսերում

1. Լսեցին ԳՊՀ հիմնադրման 20-ամյակի առթիվ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի աշխատակիցներին շնորհակալագրի ներկայացնելու և առաջարկվող միջոցառումների ծրագրի մասին հարցը /Զեկուցող` Ս. Ամիրխանյան/

Ս. Ամիրխանյանը ներկայացրեց միջոցառումների ծրագիրը և շնորհակալագրի ներկայացվող աշխատակիցներին:

Արտահայտվեցին Ս. Բագոյանը, Մ. Հերզնյանը, Հ. Զաքոյանը, Ս. Ամիրխանյանը, Հ. Ղուլոյանը:

Որոշեցին Միջոցառումների ծրագրի վերաբերյալ առաջարկությունները և աշխատակիցների ցանկը ներկայացնել ռեկտորատ:

2. Լսեցին Ուսանողների ուսման վարձերի վճարման մասին հարցը /Զեկուցող Ս. Ամիրխանյան/

Զեկուցողը ներկայացրեց ուսանողների կողմից վարձերի վճարման վիճակը: Նշվեց, որ ավարտական կուրսերում ամփոփիչ ատեստավորման կրթույլատրվեն ակադեմիական և ֆինանսական պարտքեր ող ուսանողները:

Արտահայտվեցին Հ. Ղուլոյանը, Հ. Զաքոյանը, Վ. Կարապետյանը, Մ. Հերզնյանը, Ս. Բագոյանը, Ս. Ամիրխանյանը:

Որոշեցին Հանձնարարել դեկանատին անհատական կարգով հրավիրել ուսանողներին և մանրամասն տեղեկանալ իրավիճակին և անհրաժեշտության դեպքում զրուցել ծնողների հետ:

3. *Լսեցին* Ամբիոնի վարիչների զեկույցը 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ

Արտահայտվեցին Գ. Խաչատրյանը, Ս. Բագոյանը, Մ. Հերզնյանը, Հ. Զաքոյանը, Ս. Ամիրխանյանը:

Որոշեցին

1. Հանձնարարել ամբիոններին՝ նախորդ տարիների փորձի հիման վրա պրակտիկայի վայրեր ընտրել տարածաշրջանում գործող այն ձեռնարկություններն ու կազմակերպությունները, որոնք հետագայում ավարտական աշխատանքի համար կարող են դառնալ հետազոտության օբյեկտներ:

2. Պրակտիկայի վայրերում պրակտիկայի կազմակերպչի, համալսարանի ամբիոնի ներկայացուցչի և կազմակերպության ներկայացուցչի մասնակցությամբ կազմակերպել պրակտիկայի արդյունքների ամփոփում:

Խորհրդի նախագահ՝

Ս. Ամիրխանյան

Քարտուղար՝

Ա. Ավետիսյանյան